# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ[1] ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

| Հ/Հ | Առաջարկի անվանումը | Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն) | Առաջարկի կարգավիճակը<br>• *Ընդունվել է*<br>• *Մերժվել է* | Մերժման դեպքում՝ հիմնավորումը |
|---|---|---|---|---|
| 1. | Նորաշեն բնակավայրի մարզադաշտի տարածքի բարեկարգում և ֆուտբոլի խաղադաշտի կառուցում | Խաղադաշտի կառուցման համար նախատեսված հողամասը գտնվում է Նորաշեն բնակավայրի 3-րդ փողոցի վրա, մակերեսը կազմում է շուրջ 4350քմ: Հողամասի կադաստրային ծածկագիրն է 02-078-0017-0025, հողամասը պատկանում է համայնքին, հողամասը բնակավայրերի նպատակային և բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս է: Անհրաժեշտ է հողամասը ցանկապատել ամբողջությամբ, անցկացնել լուսավորության համակարգ, բարեկարգել տարածքը, ամբողջ շրջագծով տնկել ծառեր (ցանկալի է բարդի), կառուցել ժամանակակից նորմերին համապատասխան մինի ֆուտբոլի դաշտ:Այս ծրագրով բնակավայրի դպրոցահասակ երեխաները և երիտասարդները գարնանը, ամռանը և աշնանը կունենան զբաղմունք, կզբաղվեն սպորտով, կունենանք առողջ սերունդ, ինչու չէ նաև՝ ֆուտբոլի մեծ պոտենցիալ ունեցող երեխաներին ի հայտ կբերենք: | Ընդունվել է | |
| 2. | Գեղադիր բնակավայրում՝ ներբնակավայրային փողոցների տուֆ քարով քարապատում | Գեղադիր բնակավայրի ներբնակավայրային փողոցները գրունտային են, երբևիցե չեն եղել բարեկարգված կամ առավել ևս ասֆալտապատված: Այս ծրագրով առաջարկվում է Գեղադիր բնակավայրի հիմնական փողոցներում կատարել սալապատման աշխատանքներ տուֆ քարով, քանի որ այն ավելի երկարակյաց է, հարմարավետ է տեղաշարժման իրականացման համար: | Ընդունվել է | |
| 3. | Գեղաձոր բնակավայրի մշակույթի տան դահլիճի հիմնանորոգում | Գեղաձոր բնակավայրի մշակույթի տունը գտնվում է բնակավայր Գեղաձոր 1-ին փողոց 32 հասցեում, կառուցվել է 1972-1974թթ., շենքը ամբողջությամբ հիմնանորոգվել է 2013 թվականին բացի դահլիճից: Դահլիճը գտնվում է շատ վատ վիճակում, ունի հիմնանորոգման կարիք, այս ծրագրի իրականացմամբ լուծվում է երիտասարդության զբաղվածության հարցը, կկազմակերպվեն միջոցառումներ, համերգներ: | Ընդունվել է | |
| 4. | Գեղաձոր բնակավայրում ֆուտբոլի դաշտի կառուցում | Առաջարկում եմ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղաձոր բնակավայրում գտնվող, չօգտագործվող 02-031-0019-0003 կադաստրային ծածկագրով հողատարածքի վրա կառուցել ֆուտբոլի դաշտ /800քմ/: Գեղաձոր բնակավայրում չկա որևէ տարածք, որտեղ երեխաները կարող են սպորտով զբաղվել: Ֆուտբոլ խաղալու համար գնում են այլ բնակավայրեր: Օրհասական է ֆուտբոլի դաշտի կառուցումը, որովհետև առողջ սերունդ ունենալու համար պարտադիր է, որ երեխաները զբաղվեն սպորտով, հատկապես՝ ֆուտբոլով: Ֆուտբոլի դաշտը կծառայի բնակավայրի բոլոր երեխաներին, ովքեր սիրում են առողջ ապրելակերպով զբաղվել: Դաշտի կառուցումը կնպաստի երեխաների զբաղվածությանը և կօգնի, որ հետագա մասնագիտություն ընտրելուց | Ընդունվել է | |

[1] Այլուսակում լրացվում են Առաջարկների ներկայացման փուլում առցանց և թղթային տարբերակներով ներկայացված բոլոր առաջարկները:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կենտրոնանան նաև ֆուտբոլիստի մասնագիտության վրա և չխուսափեն սպորտային միջոցառումներին և մրցույթներին մասնակցելուց: | | |
| 5. | Գեղաձոր բնակավայրում խմելու ջրի համար 50 խմ ծավալով ՕԿՋ և ջրագիծ կառուցելու մասին | Առաջարկում եմ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղաձոր բնակավայրում կառուցել խմելու ջրի ՕԿՋ 50 խմ ծավալով և վերանորոգել 1-ին փողոց 57 հասցեի մոտից մինչև 6-րդ փողոց 7 հասցեի մոտ գտնվող շուրջ 1,350 մ /f75/ խմելու ջրի խողովակաշարերը: Խմելու ջրի որակը շատ կարևոր է բոլորիս առողջության համար, իսկ մեր բնակավայրի խմելու ջուրը գարնան վարարումների ժամանակ մինչև խոր աշուն խմելու ենթակա չէ: Բնակիչները տարվա կեսը մաքուր ջուր են գնում, սա այն դեպքում, երբ մեր պապերը Գեղաձորում բնակություն են հաստատել Արագածից սկիզբ առնող, մաքուր ու քաղցրահամ խմելու ջրի համար: Ջուրը կյանք է, և որպեսզի մեր բնակավայրում ևս կյանքը որակյալ և ապահով լինի, խմելու ջրի խողովակաշարի կառուցումը առաջնահերթ լուծում պահանջող խնդիրն է: | Ընդունվել է | |
| 6. | Գեղարոտ բնակավայրում փողոցային լուսավորության ցանցի կառուցում | Գեղարոտ գյուղը գտնվում է Ծաղկահովիտ համայնքի կազմում, բնակչությունը կազմում է 552 բնակիչ, հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն է: Բնակավայրում առկա է լուսավորման ցանց, սակայն ամբողջական չէ, կառուցվել է 2014 թվականին, ունի բազմաթիվ խնդիրներ: Լուսավորման ցանցի կառուցմամբ գյուղը կունենա 100% փողոցային լուսավորություն, որը հիմա արդեն անհրաժեշտ պայման է գյուղերում: | Ընդունվել է | |
| 7. | Վարդաբլուր բնակավայրի սուրբ Դանիել եկեղեցի տանող ճանապարհի քարապատում | Վարդաբլուր բնակավայրը գտնվում է Արագած լեռան հյուսիսային կողմում՝ Ջանգի թափա լեռան ստորոտում: Գյուղն ունի եկեղեցի, որը կառուցվել 1911 թվականին գյուղի բնակիչների միջոցներով: Եկեղեցում յուրաքանչյուր կիրակի իրականացվում է պատարագի ծես, սակայն եկեղեցի տանող ճանապարհը գրունտային է, տեղ-տեղ անանցանելի: Ճանապարհի կառուցումով հավատացյալ մարդիկ ավելի հարմարավետ կգնան եկեղեցի, կշատանա եկեղեցու հետևորդների քանակը: | Ընդունվել է | |
| 8. | Գեղադիր բնակավայրում տրանսպորտի սպասարկման կանգառների կառուցում | Գեղադիր գյուղը գտնվում է Հ-21 միջպետական ճանապարհի վրա, բնակավայրով անցնում են մի շարք կանոնավոր երթուղիներ (հասարակական տրանսպորտ), սակայն հատկապես եղանակային անբարենպաստ պայմաններում երթուղուց օգտվելը համայնքի բնակիչների համար առաջացնում է անհարմարություններ և քանի որ շատ երեխաներ հաճախում են սպորտային դպրոցներ և մշակութային հաստատություններ, նրանց տեղաշարժման համար կանգառները բնակավայրում դարձել են խիստ անհրաժեշտություն: Առաջարկում եմ Գեղադիր բնակավայրում կառուցել ավտոկանգառներ: | Ընդունվել է | |
| 9. | Վարդաբլուր բնակավայրում ֆուտբոլի դաշտի կառուցում | Վարդաբլուր բնակավայրը չունի ոչ մի տեսակի խաղահրապարակ, գյուղում կան երիտասարդներ, ովքեր չունեն զբաղմունք դպրոցից դուրս: Առաջարկում եմ կառուցել ֆուտբոլի խաղադաշտ նախկին ֆուտբոլի խաղադաշտի վայրում, որը պետք է ցանկապատվի, անցկացվի լուսավորություն, կահավորվի: Այս խնդիրը կլուծի երիտասարդների զբաղվածության հարցը միևնույն ժամանակ կունենանք առողջ երիտասարդներ: | Ընդունվել է | |
| 10. | Ծաղկահովիտ բնակավայրի սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերակառուցում | Ծաղկահովիտ բնակավայրում  է գտնվում սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը կառուցվել է 1853-1860-ական թվականներին, 1988 թվականի ավերիչ երկրաշարժին հետևանքով եկեղեցին ավիրվել է, քանդվել են տանիքը, պատերը: Գյուղի բնակիչների և Ծաղկահովիտի համայնքապետարանի միջոցներով կատարվել են որոշակի աշխատանքներ: Անհրաժեշտ է ամբողջությամբ վերակառուցել եկեղեցին, քանի որ բնակավայրում այլ եկեղեցի չկա: Եկեղեցու վերակառուցմամբ բնակավայրում կկազմակերպվեն ծեսեր, պատարագներ, | Ընդունվել է | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պակաղորություններ: | | |
| 11. | Նորաշեն բնակավայրի երեք փողոցների տուֆ քարով քարապատում | Նորաշեն բնակավայրը գտնվում է Արագած լեռան հյուսիսային լանջին, ծովի մակերևույթից 2000 մետր և ավել բարձրության վրա: Բնակչությունը կազմում է մոտ 1255 բնակիչ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ, շատ են արտագնա աշխատանքի մեկնողները, որը կրում է սեզոնային բնույթ՝ վաղ գարնանը գնում են, ուշ աշնանը գալիս են: Գյուղը ձևավորվել է 1828 թ-ից հետո Ալաշկերտի գավառից տեղահանված ընտանիքների կողմից: Գյուղի հիմնադիրները 1834 թվականին կառուցել են գյուղի սուրբ Աստվածածին եկեղեցին, որը խորհրդային տարիներին դարձել էր պահեստ: 2014 թվականին գյուղի բնակիչների հանգանակություններով եկեղեցին վերաօծվեց և իր դռները բացեց հավատացյալ ժողովուրդի առաջ, որտեղ մատուցվում են պատարագներ, կատարվում են եկեղեցական ծեսեր: Գյուղի հյուսիսային կողմում է գտնվում Նորաշենի Ռաֆիկ Հարությունյանի անվան միջնակարգ դպրոցը, որը հայ ժողովրդին տվել է անվանի զավակներ, համաշխարհային քիմիայի օլիմպիադայի բրոնզե մեդալակիրներ, ներկայումս դպրոցում ուսանում են 165 աշակերտ: Դպրոցը համայնքում առանձնանում է իր ուսուցչական կոլեկտիվի բարձր մակարդակով և կազմակերպվածությամբ: Դպրոցի հարևանությամբ է գտնվում համաշխարհային երկրորդ պատերազմի վետերան Վելիխան Մուքոյանի անվան մանկապարտեզը, որտեղ ուսանում են շուրջ 60 սաներ: Մանկապարտեզը խորհրդային կարգերի փլուզումից հետո դադարել էր գործելուց, սակայն 2014 թվականի Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հիմնանորոգվեց և վերագինվեց, իսկ 2017 թվականի օգոստոսի 1-ին իր դռները բացեց գյուղի և հարևան Գեղադիր գյուղի սաների առջև: Նորաշեն բնակավայրի եկեղեցի, դպրոց և մանկապարտեզ տանող ճանապարհները գտնվում են անբարեկարգ վիճակում, վերջին անգամ վերանորոգվել են 1970-ական թվականներին: Այս երեք փողոցների տուֆ քարով քարապատման ծրագրով գյուղի կենտրոնը կբարեկարգվի և եկեղեցի, դպրոց ու մանկապարտեզ տանող ճանապարհը արդեն կդառնա գյուղի բնակիչների սիրելի վայրերը: Ճանապարհի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 1075 գծամետր, լայնությունը տատանվում է 5-7 մետր: | Ընդունվել է | |
| 12. | Ծիլքար բնակավայրի լուսավորության ցանցի կառուցում | Ծիլքար բնակավայրում արդիականացնել լուսավորության ցանցի կառուցում: Լուսավորությունը կարևոր դեր է խաղում ճանապարհային անվտանգության ապահովման, վթարների իջեցմանը՝ մարդկանց տեղաշարժը գիշերային ժամերին: Լուսավորության ցանցի կառուցումով զերծ կմնանք թափառող շների և գայլերի հարձակումը բնակավայր: | Ընդունվել է | |
| 13. | Լեռնապար բնակավայրում խաղահրապարակի կառուցում | Առաջարկում ենք Լեռնապար բնակավայում կառուցել մանկական խաղահրապարակ | Ընդունվել է | |
| 14. | Լեռնապար բնակավայրում խաղահրապարակի կառուցում | Կառուցել խաղահրապարակ | Մերժվել է | Նույն բնակավայրից նույն բովանդակությամբ արդեն առաջարկ կա |
| 15. | Լեռնապար բնակավայրում ֆուտբոլի դաշտի կառուցում | Լեռնապար բնակավայրում ո՛չ խորհրդային, ո՛չ էլ հետխորհրդային տարիներին չի եղել ֆուտբոլի դաշտ, գյուղի երեխաները չունեն զբաղմունք: Ֆուտբոլի դաշտի կառուցումով գյուղի երեխաները կունենան զբաղմունք, մենք կունենանք առողջ սերունդ: | Ընդունվել է | |
| 16. | Լեռնապար բնակավայրում խաղահրապարակի կառուցում | Լեռնապար բնակավայրում չկան խաղահրապարակներ, երեխաները դպրոցի դասերից հետո չունեն խաղալու տեղ: Առաջարկում ենք Լեռնապար բնակավայրում կառուցել երեխաների համար | Ընդունվել է | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | խաղահրապարակ: | | |
| 17. | Բերքառատ բնակավայրում մանկապարտեզի կառուցում | Բերքառատ բնակավայրում խորհրդային տարիներին եղել է մանկապարտեզ, որտեղ հաճախել են շուրջ 60 երեխա: Խորհրդային կարգերի փլուզումից հետո ավիրվեց նաև մանկապարտեզը: Բնակավայրում կան շուրջ 45 սաներ, ովքեր հնարավորություն չունեն մանկապարտեզ հաճախելու: Բերքառատ բնակավայրի մշակույթի տան շենքում առկա է ազատ տարածք, որտեղ անհրաժեշտ է կոսմետիկ վերանորոգում և գույք: | Ընդունվել է | |
| 18. | Բերքառատ բնակավայրի գործող գերեզմանատան ցանկապատում և տարածքի բարեկարգում | Բերքառատ բնակավայրում առկա է երկու գերեզմանոց, որտեղ չկա ցանկապատ: Գյուղի գերեզմանոցում առանց արգելքի թափառում են տարբեր կենդանիներ: Խնդրում ենք կառուցել ցանկապատ: | Ընդունվել է | |
| 19. | Հնաբերդ բնակավայրի մի քանի փողոցների քարապատում | Հնաբերդ բնակավայրում ներբնակավայրային փողոցները գրունտային են, եղանակային վատ պայմանների ժամանակ նույնիսկ անանցանելի: Առաջարկում եմ քարապատում իրականացնել 25-րդ, 43-րդ, 36-րդ և 50-րդ փողոցներում: | Ընդունվել է | |
| 20. | Հնաբերդ բնակավայրի ջրամբարի պատվարի կառուցում | Հնաբերդ բնակավայրում առկա է երեք հատ արհեստական ջրամբար, որոնք օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով: Անհրաժեշտ է երկրորդ ջրամբարի պատվարը բարձրացնել և ամրացնել, որպեսզի ջրի կուտակման ծավալը մեծանա: | Ընդունվել է | |
| 21. | Լեռնապար բնակավայրում ջրատար առուների մաքրում | Գյուղամիջյան ջրահեռացման ամենամեծ առվի մաքրում | Մերժվել է | Առաջարկի վերնագիրն ու բովանդակությունը գրվել է անգլերեն տառերով և հայերեն բառերով, չի գրվել առաջարկի իրականացման վայրը |